ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱ ՀՀ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՈՐԵՎԷ ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ:

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԳԱՅԱՆԵ ԶԱՐՈՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԱՇՏԱՐԱԿ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ1. Կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը մայրենիի դասագրքերի միջոցով

1.1.Կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը տարրական դպրոցում 5

1.2.Մայրենիի դասագրքերը և դրանց դասավանդման դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում.....10

ԳԼՈՒԽ2.Հետազոտական աշխատանքի կազմակերպում և արդյունքների վերլուծություն.....21

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....25

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային հասարակության ստեղծած հոգևոր և նյութական արժեքները բնութագրում են հասարակության զարգացման մակարդակը և փոխանցվում սերնդե- սերունդ: Մարդկային բարձրագույն արժեքների ձևավորման ամենակարևոր դարբնոցը դպրոցն է: Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխգործակցության արդյունք է, որի արդյունավետությունը պայմանավորված է և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների գործունեությամբ, և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի փորձառությամբ:

Առանձին ուշադրություն է դարձվում հատկապես «Մայրենի» առարկայի դասագրքերին, քանի որ սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ դեր ունեն «Մայրենիի» դասագրքերում ներառված դասանյութերի բովանդակությունը, արծածված հարցերն ու առաջադրանքները:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ժամանակակից հասարակությունն ընթանում է կրթության արդիականացման ճանապարհով, որն ուղեկցվում է արժեքների վերագնահատմամբ և արժեքների վերաիմաստավորմամբ: Նշանակալից վերափոխումները ազդել են նաև հանրակրթության և առարկայական պետական չափորոշիչների վրա՝ ուղղված կրթելուն, երկրորդայնացնելով դաստիարակության, արժեկողմնորոշման հիմնախնդիրը: Տարրական դպրոցում որոշիչ է ՀՀ քաղաքացու անձի արժեքային կողմնորոշման, բարոյական դաստիարակության հիմնահարցը, մայրենիի լեզվի իմացությունն ու պահպանումը, որի համար հատկանշական է մայրենիի դասագրքերի արժեկողնորոշիչ ուղղվածությունը:

Ազգային արժեքների պահպանումն այսօր, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում անհետանում են, հիմնախնդիր է. Վտանգված է սովորողների ազգային արժեհամակարգի ձևավուրումն ու զարգացումը:

Այսօր կրթական համակարգի գերխնդիրն է մայրենիի առարկայական դասագրքի միջոցով ապահովել ՀՀ քաղաքացու անձի արժեքային բարոյական դաստիարակությունը:

Հետազոտության նպատակը՝

Մոդելավորմամբ առաջադրել կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորումը մայրենիի դասագրքերի դերի կարևորմամբ։

Հետազոտության խնդիրները՝

1. Ներկայացնել կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը տարրական դպրոցում։
2. Կարևորել մայրենիի դասագրքերի արժեկողմնորոշիչ նշանակությունը տարրական դպրոցում։
3. Առաջադրել կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման մոդել։

Հետազոտության կիրառական նշանակությունը՝

Մեր կատարած տեսական և հետազոտական ուսումնասիրության արդյունքների հիման վրա առաջադրված տարրական դպրոցում մայրենիի դասագրքերի կարևորմամբ արժեհամակարգի ձևավորմանն ուղղված մոդելը կարող է նպաստել դպրոց-ընտանիք փոխհամագործակցային սովորողակենտրոն մանկավարժական գործունեությանը։

Հետազոտության մեթոդները՝

- գիտամանկավարժական գրականության, պարբերական մամուլի ուսումնասիրություն և վերլուծություն,
- հարցաթերթիկային հարցում,
- զրույց,
- հետազոտության քանակական և որակական վերլուծություն։

ԳԼՈՒԽ 1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՄԻՋՈՑՈՎ

1.1.Կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը տարրական դպրոցում

Կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման հիմնախնդրի կարևորությունը բխում է ժամանակակից աշխարհում հասարակության արժեքային պատկերացումների շարունակական գործընթացներից: Ձևավորված արժեհամակարգի հիման վրա են որոշվում անձի վարքի դրսևորումներն ու մտածելակերպը: Արժեհամակարգը բնորոշում են հասարակական արժեքների նկատմամբ անձի ընտրական վերաբերմունքը, որը ձևավորվում է նրա սոցիալականացման ընթացքում:

Արդի մանկավարժության պահանջներից է կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը հարկ է դիտարկել արժեքների ընկալման, գնահատման և գործնականում դրանց նկատմամբ արտահայտած վերաբերմունքի տեսանկյունից:

Հանրակրթական դպրոցն ուղղորդում, խորացնում և ամրապնդում է կրտսեր դպրոցականների արժեհամակարգը՝ դրանք համալրելով ու հարստացնելով կրթամշակութային ոլորտի արժեքային ձեռքբերումներով, որոնք սկզբում կրտսեր դպրոցի, հետագայում նաև հիմնական դպրոցի կրթության բովանդակության բաղադրատարրերն են կազմում[7,էջ15]:Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: <<Երեխան ծնվում է ընտանիքում, հետո դրվում մեր ձեռքերում, որ կոկենք: Նրա համար ո՞վ է աշխարհը ճանաչելու բանալին, ընտանիքում ծնողն է, մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակն ու ուսուցիչը: Երեխան

ընտանիքում ծնողի արժեքների կրողն է, իսկ մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակի և ուսուցչի>>,- [8,էջ54]։

Արդի կրթական համակարգում դեռևս պահպանվում է արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված հետևյալ մոտեցումը՝ դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը։ Մանկավարժության մեջ արժեքային կրթության նոր մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է։ Ըստ այս մոտեցման՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել։ Արժեքների և արժեքային կողմնորոշումների մասին տարբեր մտածողներ սկսել են խոսել հասարակական զարգացման ամենավաղ փուլերում։

Արժեքը և նշանակությունը միշտ չէ, որ համընկնում են։ Նշանակությունը կարող է լինել դրական կամ բացասական, արժեքը դրական նշանակություն է։ Արժեքը՝ սոցիալական կյանքի դրսևորում է։ Այն ձևավորվում է պրակտիկայի, արժեքի մեջ, այսինքն, այն ունի հասարակական բնույթ։ Պրակտիկայի հետ կապը որոշում է արժեքների պատմական փոփոխականությունը, արժեքները փոխվում են հասարակության զարգացման հետ, ինչը երեկվա արժեքն է, այսօր կարող է դադարել լինել։ Հասարակության կյանքում արժեքների դերը հետևյալն է.

1. Տարբեր արժեքների յուրացման միջոցով մարդը ձեռք է բերում սոցիալական փորձ, կցված է մշակույթին, ձևավորվում է որպես անձ։
2. Մարդը ստեղծում է նոր և պահպանում է հին արժեքներ, որոնք ազդում են մշակույթի զարգացման վրա։
3. Գործողությունների, մտքերի, իրերի արժեքը այն է, թե որքան են նրանք նպաստում սոցիալական առաջընթացին և որքանով է նրանց դերը մեծ մարդու ինքնիրացման գործում։

Արժեքների, արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը տեսական ժամանակ փիլիսոփայական ուղղվածություն ուներ: Ավելի ուշ մանկավարժական արժեբանությունը ձևավորվեց որպես առանձին գիտաճյուղ: Հայ իրականությունում ակնհայտ փաստ է, որ դպրությունը, գիրն ու գրականությունը միշտ էլ դիտարկվել է բարձրագույն արժեք: Ինչպես նշում է Լ. Թորգոմյանը «Անվիճելի է, որ կրթությունը, լուսավորությունը, առաջնային են եղել Մ. Մաշտոցի արժեքային գիտակցության մեջ, ապացույցը նրա ողջ կյանքը, պետական-հասարակական և մանկավարժական գործունեությունը և այն մեծաթիվ հոգևոր արժեքներն են, որոնք ստեղծվեցին գրերի գյուտից հետո և շարունակում են ստեղծվել ցայսօր: Դրանով իսկ Մ. Մաշտոցը յուրաքանչյուր հայի ազգային գիտակցության մեջ է որպես հայոց մեծ սուրբ, հայ ժողովրդի ազգային մեծագույն արժեք »[7, էջ 85]:

Լ. Թորգոմյանը գալիս է այն եզրակացության, որ «Արժեբանական մոտեցման տեսանկյունից քննարկելով հայ մշակույթի գործիչների կյանքը, գործունեությունը և ստեղծագործությունը՝ գալիս ենք հետևության, որ արժեքներով միաբանված այս մտածողների հայացքներում ընդհանուր են երկիրը, ժողովուրդը, մարդը, քրիստոնեությունն ու նրա հոգևոր արժեքները, կրթությունը, դաստիարակությունը, գիտությունը, լուսավորությունն ու դրանցից ածանցվող այլ արժեքներ»[7,էջ 77]:

Ս. Լ. Ռուբինշտեյնը փաստում է, որ արժեքները, արժեքային կողմնորոշումները առաջնային չեն, նրանք մարդու և աշխարհի փոխհարաբերության արդյունք են, որոնք միավորում են այն ամենը, ինչ ստեղծել և արժևորել է մարդը իր պատմական զարգացման ընթացքում:

Արժեքների, արժեքային կողմնորոշումների դերը անձի ձևավորման գործում դիտարկվել են մի շարք հոգեբանների կողմից (Լ. Ի. Բոժովիչը, Ա.Գ. Զդրավոմիսլովան, Ա.Ն. Լեոնտևը, Ս.Լ. Ռուբինշտեյնը և այլք): Ըստ Ա.Ն. Լեոնտևի՝ արժեքը հոգեբանական երևույթ է դառնում այն դեպքում, երբ ձեռք է բերում անձնային բնույթ: Ա. Ն. Լեոնտևը նշում է,որ «տվյալ առարկայի նշանակության յուրացումը երեխայի կողմից տեսականորեն, թե գործնականորեն բավական չէ, անհրաժեշտ է դաստիարակել պահանջվող վերաբերմունք »[11,էջ 15]:

Այսօր հանրակրթական դպրոցում առաջնային է սովորողների արժեքային կողմնորոշումների, արժեհամակարգի ձևավորումը, որն ապահովում է անձի ընդհանուր զարգացումը, վարքի ձևավորումը:

Ինչպես նշում է Լ. Թորգոմյանը «Արժեքային հարաբերությունները, դիրքորոշումները և կողմնորոշումները մարդու վարքագծի ներքին կարգավորիչներն են: Յուրաքանչյուր մարդ, կառուցելով իր միջանձնային և հասարակական վարքագիծը, ղեկավարվում է որոշակի բարոյական արժեքներով [7, էջ 21]:

Հայաստանում անձի արժեքների, արժեքային կողմնորոշումների խնդիրը կապված է նաև ազգային մտածողության առանձնահատկություններից, որն ունի երեք հիմքեր՝ ընտանիք, ուսուցիչ և իդեալներ: Ընտանիքը՝ որպես սոցիալական հաստատություն, կարևոր է երեխայի անձի բարոյական որակների, հատկությունների, վարքի նորմերի ձևավորման գործում: Ուսուցիչը նույնպես փոխակերպվեց ժամանակակից հասարակության մեջ: Նրա վարքի բնույթը փոխվել է ինչպես դպրոցում, այնպես էլ հասրակության մեջ: Նա դադարել է միավորել իր մեջ ուսուցչին և դաստիարակին: Ուսուցիչը դադարել է լինել ընկեր, խորհրդատու, դարձել է անտարբեր մտածող: Աղքատ ուսուցիչը այլևս հեղինակություն չէ շատ դպրոցականների համար: Բնականաբար, նման ուսուցիչը և նրա առաջադրած արժեքները սովորողների շրջանում որոշ հակամարտություններ է առաջացրել:

Ընդհանուր առմամբ, արժեհամակարգի ձևավորումը կրտսեր դպրոցականների մոտ նպատակ ունի ձևավորել հայրենասեր անձ և քաղաքացի, որը պետք է՝

1.Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:

2.Հարգի Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:

3.Գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:

4.Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը։

5.Կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ։

6.Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին ու ճշմարիտը։

7.Գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք։

8.Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը։

9.Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ։

10.Անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը։

11.Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը։

12.Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում [11,էջ75]։

Այսպիսով՝ կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը բավականաչափ բարդ և շարունակական գործընթաց է և երկար ժամանակ է պահանջում:

Այս գործընթացում անմասն չպիտի մնա նաև ընտանիքը։ Հույժ կարևոր է ծնողի հետևողական և տեղեկացված լինելը այս հիմնախնդրում։ Եվ ինչպես հիմնավորում է Ա. Թոփուզյանը՝ «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները կանխման և հաղթահարման ուղիները» խորագրով գիտաժողովի ընթացքում, դպրոցն ու ընտանիքը, ծնողն ու ուսուցիչը գործընկերներ են և նրանց նպատակները նույնն են: Պրոֆեսորի կարծիքով, պետք է թերթել հայ

մանկավարժությանժառանգության՝ հատկապես ընտանեկան դաստիարակությանը նվիրված էջերն ու դրանցից քաղած դասերը համադրել դարի պահանջների հետ»[19, էջ 56]։

1.2.Մայրենիի դասագրքերը և դրանց դասավանդման դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում

Խոսելով դասագրքերի դաստիարակչական նշանակության մասին հատուկ մեծ ուշադրություն է դարձվում տարրական դասարաններում դասավանդվող «Մայրենի» առարկայի դասագրքերին, քանի որ առաջին դասարանից սկսած «Մայրենի» առարկան ուղեկցում է սովորողներին ողջ ուսուցման գործընթացում։ Մինչ Մայրենիի դասագրքերին անդրադառնալը, քննարկենք մայրենիի առարկայական ծրագիրն ու առարկայական չափորոշիչները, պարզելու համար, թե տարրական դպրոցն ավարտողը ինչ պետք է իմանա, ինչ կարողանա, ինչին տիրապետի և ինչ արժեքային համակարգ պետք է ունենա։ Հանրակրթության պետական չափորոշիչը, որը սահմանում է կրթության բովանդակությունը, որի հիման վրա մշակվում են ուսումնական առարկայական չափորոշիչներն ու ծրագրեր, օրինակելի ուսումնական պլաններ և ուսումնական գործընթացը կանոնակարգող նորմատիվ այլ փաստաթղթեր, վերանայվում են ծրագրերը, դասագրքերը և ուսումնական նյութերը, սահմանում է կրթության բովանդակության մեջ արժեքային համակարգի կարևորությունը։

Ըստ պետական չափորոշչի «արժեքային համակարգ» բաղադրիչի նպատակն է[7,էջ65]։

- ձևավորել անձ և քաղաքացի ով պետք է գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ,
- լինի նախաձեռնող, դրսևորի արժանվայել պահվածք,
- լինի մարդասեր, հայրենասեր, հանդուրժող,
- հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր,
- գիտակցի, որ գիտությունը, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից

աշխարհում,

- գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները և մասնագիտական վարպետությունը,
- կարևորի բարոյական չափանիշները և համամարդկային արժեքները, լինի ազնիվ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

Առարկայական չափորոշչում հստակ նշվում է, թե տարրական դպրոցն ավարտողն ինչ արժեքային համակարգ պետք է ունենա: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերին ներկայացվող պահանջները բազմազան են, դրանցից ամենակարևորներից մեկը դասագրքերի դաստիարակչական գործառույթն է:

Հետևաբար, կարող ենք ասել, որ Մայրենիի դասագրքերը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է տարրական դասարանների համար նախատեսված դասագրքերին ներկայացվող հիմնական պահանջներին: **Մասնավորապես.**

- Դասագիրքը շարադրված է պարզ և մատչելի,
- Դրանում շարադրված նյութերը գիտական են, ճշգրտված, ունեն գաղափարական ուղղվածություն:
- Դասագրքի նկարազարդումները հիմնականում բովանդակային են, գրավիչ և համապատասխանում են սովորողների տարիքին:
- Մայրենիի դասագրքերը ձևավորում են որոնողական միտքը, զարգացնում է սովորողների ստեղծագործական մտածողությունը, ճանաչողական ընդունակությունները, ինքնուրույն աշխատանքի հմտությունները:

Հաջորդիվ ուսումնասիրելով տարրական դասարանների մայրենիի առարկայական չափորոշիչը, որտեղ նշվում է, թե տարրական դպրոցում մայրենի լեզվի դասավանդումը սովորողների մեջ ինչպիսի անձնային որակներ և արժեքներ պետք է ձևավորի, կարող ենք ասել, որ Մայրենիի 3-րդ դասարանի դասագիրքը և դրանում ներառված դասանյութերն ու առաջադրանքներընպաստում են սովորողների մոտ այդ անձնային որակների և արժեքների ձևավորմանը: Մասնավորապես.

- իր ազգային պատկանելության, մայրենի լեզվի անհրաժեշտության և առաջնայնության գիտակցում,
- հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ,
- Ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ,
- Ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն:

Հետազոտության ընթացքում կարևորել ենք դասագրքերում ընդգրկված թեմատիկ նյութերը, քանի որ դասագործընթացի հիմնական նպատակը օրվա դասանյութի դաստիարակչական և ուսուցողական գործառույթների իրականացումն է: Այս դիրքորոշումից ելնելով էլ մանրամասն ուսումնասիրել ենք տարրական դասարանների համար նախատեսված «Մայրենի» դասագրքերի նյութերը՝ պարզելու համար, թե դրանցում զետեղված ստեղծագործությունները որքանով են նպաստում կրտսեր դպրոցականների մեջ հայրենասիրության դաստիարակմանը:Կատարել ենք նաև Մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցի կառուցվածքային և բովանդակային դիտարկում և վերլուծություն: Մայրենիի դասագրքերիի կառուցվածքում ներառվում է ուսումնական բնագիրը, տեքստը՝ որպեսհիմնական բաղադրիչ, մեթոդական կառույցը և ոչ տեքստային օժանդակ բաղադիրչները:

Ուսումնասիրելով դասագրքերը՝ եզրակացրինք, որ գործող դասագրքերը, մանավանդ երրորդ և չորրորդ դասարանների, իրենց թեմատիկայով ընդհանուր առմամբ բավարար միջավայր ստեղծում են հայրենասիրություն դաստիարակելու համար: «Մայրենի 3» դասագրքում (հեղ. Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Ե. Ջիլավյան) առկա է 142 ուսուցանվելիք նյութ, որից 5-ը վերցված է Թումանյանից, 1-ական Ս. Կապուտիկյանից, Հ. Սահյանից, Հ. Շիրազից, Մ. Գոշից, Վ. Այգեկցուց, մյուսները այլ հեղինակներից: Հայրենասիրության վերաբերյալ թեմատիկ խմբում ներառված է հետևյալ դասանյութերը՝ «Հայկը և Բելը», «Սասունցի Դավիթ» (Հովհաննես Թումանյան), «Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց» (Հովհաննես Շիրազ),«Զրույց բացատում»(Կարո Մելիքսեթյան), «Բաբելոնյան աշտարակաշինություն» «Մխիթար Հերացին և տակառագործը», «Երկնքի բոլոր աստղերը

ճանաչում էին նրան» (Վաչագան Սարգսյան), «Քաջ Անդրանիկ» (Գուսան Համազասպ)։ Նշված դասանյութերից յուրաքանչյուրը կրտսեր դպրոցականին սովորեցնում է սիրել ու գնահատել ազգային արժեքները, լեզուն, հայրենիքը, ճանաչել ազգային հերոսներին, որոնք տարբեր բնագավառներում իրենց գործով սխրանքներ են կատարում, անմահանում և ողջ աշխարհում բարձր պահում հայի անունը։ Պարզելու համար Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքի դաստիարակչական նշանակությունը իրականացրել ենք դասագրքի բովանդակային և կառուցվածքային վերլուծություն։ Մասնավորապես, կարող ենք նշել, որ Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքի բովանդակությունը բաժանվում է վեց թեմատիկ խմբերի։ Դրանք են.

- Փոքրիկ պատուհան դեպի մեծ աշխարհ
- Բ՛աց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ
- Ժողովուրդն իմաստում է
- Հայրենի՛ք, ես մի զարկն եմ քո բազկի
- Լինում է , չի լինում՝ մի հեքիաթ է լինում
- Ամենասովորական հրաշքներ

Թեմատիկ խմբերին հաջորդում են «Ամփոփի՛ր իմացածդ», «Ստուգի՛ր ինքդ քեզ», «Փոքրիկ բառարան», «Որոշ առաջադրանքների պատասխաններ», «Հավելվածներ, բովանդակություն» բաժինները։ Աղյուսակի տեսքով ներկայացրել ենք Մայրենիի 3-րդ դասարանի դասագիրքի ընդհանուր բովանդակությունը և դրանում ներառված դասանյութերի դաստիարակչական նշանակությունը/ տես աղյուսակ 2/։ Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքի առաջին թեմատիկ խումբում ներառված է տասը դասանյութ։ Դասագրքի այս բաժնի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ստեղծագործությունների գերակշռող մասը կազմում են բանաստեղծությունները, որոնք ավելի հեշտ են ընկալվում սովորողների կողմից։ Նշենք նաև, որ այս թեմատիկ խմբում ներառված ստեղծագործությունների մեծ մասի հեղինակները հայ գրողներ են։

Դիտարկենք այս թեմատիկ խմբում ընդգրկված մի քանի դասանյութ, որոնք սովորողների կրթության և դաստիարակության գործընթացում ունեն կարևոր դեր և

նշանակություն։Առաջինը դիտարկենք էջ 4-ի «Հարստություն» բանաստեղծությունը, որը ուսումնասիրելով սովորողները կկարևորեն գրքի դերը իրենց ամբողջ կյանքի ընթացքում կամ էջ 14-ի Հ. Թումանյանի «Ամենից լավ տունը» դասանյութը, որը ուսումնասիրելով աշակերտները կարողանում են գնահատել իրենց տունը, հայրենիքը,տղայի վերաբերմունքը մոր նկատմամբ, իսկ դասի ավարտին կատարում են հետևյալ եզրահանգումը. «Համոզված եմ, որ դու հասկացար, թե որն է ամենից լավ տունը»։ Հասարակության մեջ իր տեղն ու դերը գիտակցման ձևավորմանն է նպաստում էջ 17-ի «Տանկը թանգարանում» բանաստեղծությունը, որի եզրահանգումն է. «Այսպիսով,այս աշխարհում ապրիր այնպե՛ս, որ զենքեր տեսնենք միայն թանգարանում», կամ էջ 19-ի «Սեպտեմբերի 21» դասանյութը, որի օգնությամբ աշակերտները հարստացնում ենիրենց գիտելիքները սեփական երկրի մասին, և վերջում տրվում է հետևյալ եզրահանգումը. «Այսպիսով, աշխարհը գեղեցկացնում են մարդիկ ու նրանց լավ արարքները։ Դու էլ այս աշխարհի մարդկանցից մեկն ես»։ Այս ամենը նպաստում է, որ երեխան գիտակցի, որ ինքը հասարակության մեջ ունի իր տեղն ու դերը և պետք է կարողանա դրսևորել արժանավայել պահվածք։ Ծնողների, տարիքով մեծերի նկատմամբ հարգանքի դրսևորման գիտակցման ձևավորմանն ու զարգացմանն է նպաստում էջ 26-ի «Մայր սագի հեքիաթը», որտեղ արժևորվում է մոր դերը և վերջում նշվում է Հ. Շիրազի բանաստեղծական տողերը.«Երբ նեղն եմ ընկնում, երբ հուրն է հանգչում, նախ մորս ասա՝ Աստծուն եմ կանչում»։Նույն նպատակն ունի նաև էջ 27-ի «Իմ դասագրքերը» բանաստեղծությունը, որտեղ նշվում է, որ մայրիկի բարի խոսքերը, հայրիկի ձեռքերն ամենալավ դասագիրքն են և եզրահանգումն է. «Այսպիսով, դեպի մեծ աշխարհ տանող պատուհանը քեզ համար բացում են առաջին հերթին քո ծնողները»։Առաջին թեմատիկ խմբում քիչ չեն նաև առածներն ու դարձվածքները, որոնք ևս ունեն շատ մեծ դաստիարակչական նշանակություն, օրինակ 5, 9, 16 և 29 էջերում գրված առածները, որոնք անմիջական բխում են տվյալ օրվա թեմայի գլխավոր գաղափարից։

- Ինչքան էլ գիտուն լինես, չիմացածդ մի անգետից հարցրու։
- Խոսք կա՝ սարի գլուխ կհանի, խոսք կա՝ սարից ներքև կբերի։
- Օտարության մեջ ապրողի հացը դառն է, ջուրը՝ թույն և այլն։

Այսպիսով՝ ուսումնասիրելով առաջին թեմատիկ խմբում ներառված դասանյութերը կարող ենք նշել, որ դրանցից յուրաքանչուրը իր կարևորությունն ունի սովորողների դաստիարակչական գործընթացը կազմակերպելիս։

Այս թեմատիկ խմբում ներառված դասանյութերը սովորողների մոտ ձևավորում են ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ, հայրենասիրություն, աշխատանքի կարևորության գիտակցում, սեփական և այլոց աշխատանքի արժևորում և գնահատում։ Տարրական դասարաններում շատ է կարևորվում նաև սովորողների գեղագիտական դաստիարակության ճիշտ կազմակերպումը, սովորողների կողմից գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողությունները։ Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքի երկրորդ թեմատիկ խմբի՝ «Բա՛ց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ» բոլոր թեմաները նպաստում են, որ սովորողները սիրեն իրենց հայրենի բնաշխարհը, կարողանան տեսնել և գնահատել բնության գեղեցկությունը և դերը մարդու կյանքում, ինչպես նաև նպաստում են նրանց գեղագիտական ճաշակի ձևավորմանը /տես աղյուսակ 3/։

Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքի երկրորդ թեմատիկ խումբում ներառված է տասը դասանյութ։ Դասագրքի այս բաժնի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թեմատիկ խմբի բոլոր ստեղծագործություններն էլ («Կաթիլը», «Գետակը», «Տերևը», «Տերևաթափ», «Սարը», «Ում համար է խնձորը» և այլն) նպաստում են, որ աշակերտները սիրեն հայրենի բնաշխարհը, գնահատեն նրա գեղեցկությունը, գեղագիտական ճաշակ ձևավորեն։ Գեղագիտական ճաշակի ձևավորմանը նպաստում են նաև այն, որ դասագրքի յուրաքանչյուր էջը նկարազարդված է, աչքի է ընկնում գունեղությամբ, գեղեցիկ նկարներով։ Այս թեմատիկ խմբում ներառված է վեց բանաստեղծություն և հինգ պատմություն։ Նշենք նաև որ դասագրքի այս բաժնում ներառված ստեղծագործություններից ութը հայ գրողների գրչին են պատկանում։Դիտարկենք այս թեմատիկ խմբում ներառված դասանյութերից մի քանիսը ներկայացնենք դրանց դաստիարակչական նշանակությունը։ Օրինակ՝ էջ 46-ի «Տերևը» և էջ 47-ի «Տերևաթափը» բանաստեղծությունները նպաստում են, որ երեխաները սիրեն բնությունը, հիանան բնության գեղեցկությամբ։ «Ժողովուրդն իմաստուն է» թեմատիկ խմբում ընդգրկված է տասնմեկ ստեղծագործություն։ Այդ ստեղծագործություններից տասը

պատկանում են հայ հեղինակների գրչին/տես աղյուսակ 4/։ Ժողովրդական բանահուսության կարևորագույն տեսակներից է առակը, որը ունի շատ մեծ դաստիարակչական նշանակություն, ուստի շատ է կարևորվում դրանց ներառումը տարրական դասարանների դասագրքերում։

Դիտարկենք «Հնարամիտը» դասանյութը։ Այս ստեղծագործությունը ուսումնասիրելով սովորողները կհասկանան, որ մարդ չպետք է որևէ գործ սկսի առանց նախօրոք մտածելու, թե ինչով այն կվերջանա, բացի այդ սովորեցնում է գնահատել գիտելիքը, խելքը։ Ստեղծագործության ուսումնասիրման ավարտին դասագրքի էջ 62-ում տրվում է հետևյալ եզրահանգումը. «Քանի դեռ խոսքը բերանումդ է դո՛ւ ես նրա տերը, երբ բերանիցդ դուրս է գալիս, նա՛ է քո տերը»[14էջ, 45]։

Շատ մեծ դաստիարակչական նշանակություն ունի նաև էջ 74-ի «Խոզն ու ագռավը» առակը, որի գլխավոր գաղափարն այն է, որ սովորողները գնահատեն և հասկանան բնության, բուսական աշխարհի կարևորությունը, սովորեն ճիշտ վարվեցողության կանոններ։ Ստեղծագործությունը նաև հնարավորություն է ընձեռում համեմատելու խոզի և տղայի արարքները և դրանից ճիշտ հետևություններ անելու կարողություններ ձևավորել։

Տարրական դասարաններում շատ է կարևորվում նաև սովորողների աշխատանքային դաստիարակությունը։ Աշխատանքի դերը հասկանալու, դիմացինի ծանր աշխատանքը գնահատելու կարողությունների զարգացմանն է նպաստում «Ճանճը» դասանյութը, որի ուսումնասիրման ավարտին սովորողները գալիս են հետևյալ եզրահանգման. «Գլուխը կախ աշխատողն ավելի բարձր է, քանքիթը ցցող ծույլը»։ Այսպիսով՝ ուսումնասիրելով երրորդ՝ «Ժողովուրդն իմաստուն է» թեմատիկ խմբում ներառված դասանյութերը, կարող ենք վստահությամբ նշել, որ դրանց ուսումնասիրությունը սովորողների մոտ ձևավորում են հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություններ։ «Հայրենի՛ք ես մի զարկն եմ քո բազկի» թեմատիկ խմբում ընդգրկված է յոթ ստեղծագործություն։ Դրանցից յուրաքանչյուրը նպաստում է նշված արժեքների ձևավորմանը /տես աղյուսակ 5/։ Դիտարկենք՝ «Մխիթար Հերացին և տակառագործը» դասանյութը։ Այս դասանյութը ունի շատ

մեծ դաստիարակչական նշանակություն։ Այն ուսումնասիրելով սովորողները գիտակցում և կարևորում են աշխատանքի դերը մարդու կյանքում, ինչպես նաև հասկանում են, թե ինչքան կարևոր է սեփական աշխատանքին շատ լավ տիրապետելը։ Դասանյութի ուսումնասիրման ավարտին դասագրքի 97 էջում տրվում է հետևյալ եզրահանգումը. «Այսպիսով, ամեն մարդ իր գործով պիտի զբաղվի։ Քո գործը սովորելն է.սովորի՛ր սիրով»։

Այսպիսով՝ ուսումնասիրելով Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքի չորրորդ՝ «Հայրենի՛ք ես մի զարկն եմ քո բազկի» թեմատիկ խմբում ընդգրկված դասանյութերը, եկանք այն եզրահանգման, որ դրանք սովորողների մոտ ձևավորում են ազգային պատկանելիության, մայրենի լեզվի անհրաժեշտության և առաջնայնության գիտակցում, հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություններ։ Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքի «Լինում է, չի լինում՝ մի հեքիաթ է լինում» թեմատիկ խմբում ընդգրկված են 5 հեքիաթ, որոնցից երկուսը պատկանում են հայ հեղինակների գրչին, իսկ մյուսները այլազգի գրողների ստեղծագործություններ են/կորեական հեքիաթ, ասորական հեքիրաթ, իտալականհեքիաթ/ /տես աղյուսակ 6/։Դիտարկենք «Թագավորն ու գյուղացին» դասանյութը, որն ուսումնասիրելով սովորողները ծանոթանում են, որ հեքիաթները ևս կարող են չափածո լինել։ Դաստիարակչական տեսանկյունից այս դասանյութը սովորեցնում է լինել աչալուրջ, խելացին, կարողանալ իրարից տարբերել լավն ու վատը։ Դասանյութի ուսումասիրման ավարտին դասագիքում տրվում է հետևյալ եզրակացությունը.

«Այսպիսով, հեքիաթը սովորեցնում է աչալուրջ լինել, քանի որ վտանգը կանխելն ավելի հեշտ է, քան հետևանքը շտկելը» կամ «Ինչպես լուծվեց աղվեցի ու շատ վեճը» դասանյութը ևս ունի դաստիարակչական մեծ նշանակություն։ Սովորեցնում է լինել ազնիվ, տարբերել բարին ու չարը, լավն ու վատը։ Դասանյութի ուսումասիրման ավարտին դասագիքում տրվում է հետևյալ խորհուրդը. «Հիշի՛ր. միշտ էլ կգտնվի մեկը, որ կցանկանա օգտվել ուրիշների անմիաբանությունից և միամտությունից»։

Այսպիսով՝ մանրամասն ուսումնասիրելով հինգերորդ՝ «Լինում է, չի լինում՝ մի հեքիաթ է լինում» թեմատիկ խմբում առանձնացված ստեղծագործությունները,եկանք այն

համոզման, որ դասանյութերը սովորողների մոտ ձևավորում են գեղեցիկը, բարին, ազնիվը, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություններ: Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքի «Ամենաանսովոր հրաշքներ» թեմատիկ խմբում ընդգրկված է ինը ստեղծագործություն: Այդ ստեղծագործություններից միայն երկուսն է հայ գրողների գրչին պատկանում: Այս թեմատիկ խմբում առանձնացված ստեղծագործությունները սովորողների մոտ ձևավորում են գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություններ /տես աղյուսակ 7/:

Դիտարկենք «Հրաշք բաց ծովում» դասանյութը: Այս ստեղծագործությունը ուսումնասիրելով սովորողները գնահատում են յուրաքանչյուր արտասանած խոսքի կարևորությունն ու նշանակությունը, Սովորողների մոտ ձևավորում է բարեկրթություն, բարոյական չափանիշներ: «Հրաշք բաց ծովում» դասանյութի ուսումնասիրման ավարտին սովորողները գալիս են հետևյա եզրահանգման. «Դու, անշուշտ, տեսել ես տանիքներից կախված սառցաշիթեր: Գուցե դրանց մեջ կան նաև քո՞ խոսքերը… Կա՞ն խոսքեր, որ դու չէիր ուզենա, որ հալվել: Արի՛ խոսենք այնպես, որ երբ հալվեն մեր խոսքերը, չփոշմանենք»: Դիտարկենք նաև էջ 139-ի «Սուտլիկ որսկանը» դասանյութը, որը սովորողներին սովորեցնում է, թե ինչ տարբերություն կա զվարճալի ստի և սուտ խոսելու միջև, բացի այդ սովորեցնում է նաև տարբերել ճիշտը ստից, սովորեցնում է լինել ազնիվ, երբեք չստել և հասկանալ, որ սուտը շատ վատ բան է, եթե այն կատակ չէ:

Այսպիսով ուսումնասիրելով վեցերորդ՝ «Ամենաանսովոր հրաշքներ» թեմատիկ խմբում ընդգրկված բոլոր դասանյութերը, եկանք այն եզրահանգման, որ դրանցից յուրաքանչյուը ունեն շատ խորը, թաքնված ենթատեքստ, ուստի դրանց ուսումնասիրումը պետք է իրականացնել շատ մանրակրկիտ: Դասանյութերը ավելի շատ նպաստում են սովորողների երևակայության զարգացմանը: Մայրենիի դասագրքերի բոլոր թեմատիկ խմբերի դասանյութերի մանրակրկիտ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ չնայած այն բանի, որ դասանյութերից յուրաքանչյուրն ունի դաստիարակչական նշանակություն՝ դասագրքում կան այնպիսի դասանյութեր, որոնք ավելի դիպում են, հետաքրքիր և ունեն առավել մեծ դաստիարակչական նշանակություն:

Մեր ուսումնասիրության ընթացքում առանձնացրել ենք այն դասանյութերը,որոնքմեր կարծիքով ունեն առավել մեծ դաստիարակչական նշանակություն։ Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

Առանձնացրել ենք «Ամենից լավ տունը», «Տանկը թանգարանում», «Հարստություն», «Մայր սագի հեքիաթը», «Արջի ու վարազի կռիվը», «Ճայը և սագը», «Խոզնու ագռավը», «Հայոց հրաշք՝ Մեսրոպ Մաշտոց», «Մխիթար Հերացնինն տակառագործը»,«Կացին ախպերը», «Հրաշք բաց ծովում» դասանյութերը։

Մեր կարծիքով նշված դասանյութերից յուրաքանչյուրն ունի դաստիարակչական շատ մեծ նշանակություն։ Դրանք առավել մեծ ազդեցությունեն ունենում սովորողների վարքագծի, արժեքային համակարգի ձևավորման վրա, մատչելի են և հետաքրքրությամբ ուսումնասիրվում են սովորողների կողմից։ Մասնավորապես «Ամենից լավ տունը» դասանյութը։ Այն մեր կարծիքով շատ դիպուկ է, հուզական և մեծ ազդեցություն է ունենում սովորողների վարքագծի, արժեհամակարգի ձևավորման վրա։ Դիտումների արդյուքում համոզվեցինք, որ դասանյութը սիրված է աշակերտների կողմից, հետաքրքիր է և նպաստում է, որ սովորողները գան այն համոզման, որ աշխարհում սեփական հայրենիքից ավելի լավ տեղ չկա ամբողջ աշխարհում։

«Տանկը թանգարանում» առանձնացրել ենք այս դասանյութը, քանի որ այն բովանդակային առումով շատ պարզ է, մատչելի սովորողների համար, բայց միևնույն ժամանակ շատ խորիմաստ է, պարզ հերոսների օգնությամբ սովորողները հասկանում են, թե այս աշխարհում ինչպես պետք է ապրել։

«Մխիթար Հերացին և տակառագործը» դասանյութը մեր կարծիքով շատ մեծ հնարավորություն է ընձեռում, որ սովորողներն հասկանան և գիտակցեն աշխատանքի դերն ու նշանակությունը մարդու կյանքում։ Ուսումնասիրության արդյունքում սովորողները կարողանում են ինքնուրույն գիտակցել և հասկանալ, որ ամեն մարդ պետք է սիրի իր աշխատանքը և զբաղվի միայն այն գործով, որը իրեն դուր է գալիս և որում նա վարպետ է։

Ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ դաստիարակչական մեծ գործառույթ ունեն նաև դասագրքում ներառված առածներն ու ասացվածքները, ինչպես նաև յուրաքանչյուր դասի վերջում տրված հեղինակի ամփոփիչ խոսքն ու ուղերձն աշակերտներին։

Մեր կողմից իրականացված դիտումների, զրուցների, դասվարների շրջանում կատարած հարցումների և դասագրքի մանրակրտիտուսումնասիրության արդյունքնում պարզ դարձավ, որ դասագրքում կան նաև այնպիսի դասանյութեր, որոնց դաստիարակչական նշանակությունը, գաղափարը, ենթատեքստը դժվար է ընկալվում սովորողների կողմից և նրանք ինքնուրույն չեն կարողանում հասկանալ, թե ինչ է ուզում հեղինակն իրենց սովորեցնել այդ ստեղծագործությամբ։ Մասնավորապես առանձնացրել ենք «Գորգի տակ» դասանյութը, որը մեր կարծիքով հիմնական գաղափարը, դաստիարակչական նշանակությունը դժվար է ընկալվում աշակերտների կողմից։

Այսպիսով, ուսումնասիրությունների ընթացքում եկանք այն համոզման, որ Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքը համապատասխանում է դասագրքին ներկայացվող հիմնական պահանջներին և մայրենիի առարկայական չափորոշչի վերջնարդյունքներին, դասագրքում ընդգրկված բոլոր դասանյութերն էլ ունեն դաստիարակչական մեծ նշանակություն և հնարավորություն են ընձեռում ավելի արդյունավետ կազմակերպել սովորողների դաստիարակչական գործընթացը:

Հայրենասիրության դաստիարակման գործում դպրոցների դերն ավելի հստակեցնելու և կարևորելու նպատակով զրուցել ենք դպրոցների դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենների, դասվարների հետ, ծանոթացել նրանց աշխատանքներին և միջոցառումներին: Դաստիարակչական գծով փոխտնօրենը, դասվարները ներկայացրին դաստիարակչական աշխատանքների պլանը, որտեղ առանձին հատված հատկացված էր հայրենասիրության դաստիարակմանը, այնուհետև իրենց կատարած աշխատանքներն այդ ուղղությամբ հիմնավորեցին լուսանկարներով և տեսահոլովակներով: Նրանցից ոմանք դժգոհությունն արտահայտեցին դասագրքերի բովանդակությունից: Դասագրքերի բացը դպրոցի դասվարները լրացնում են տարբեր տեսակի միջոցառումներով՝ հանդեսներ կազմակերպելով՝ նվիրված Անկախության օրվան, Բանակի օրվան, պատի թերթեր

ստեղծելով, հայտնի գրողների տուն- թանգարաններ այցելելով, հայրենասիրության թեմայով մրցույթներ անցկացնելով, հայ անվանի նկարիչների, երաժիշտների մասին խմբային աշխատանքներ կատարելով, Հայաստանի տեսարժան վայրեր էքսկուրսիաներ կազմակերպելով և այլն:

ԳԼՈՒԽ 2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1. Հետազոտության նպատակի ձևակերպում և իրականացված աշխատանքի նկարագրություն

Տարրական դպրոցի ուսուցիչի համար նախատեսված հարցաթերթիկի վերլուծություն

Հարցաթերթը նպատակաուղղված է ուսուցիչների շրջանում դասագրքերի արժեհամակարգի ձևավորման առանձնահատկությունների բացահայտմանը

1. Ի՞նչ եք հասկանում արժեք ասելով , նշեք դրանք:



Տրամագիր 9

Վերոհիշյալ հարցին հարցման մասնակից տարրական դասարանների ուսուցիչները պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 18%-ը նշել է, որ իրենք կարևոր արժեք են

հասկանում, այն ինչը կապված է բարոյական արժեքների հետ՝ ընկերասիրություն, ծնողասիրություն, հայրենասիրություն, այդ արժեքները իրենց համար կարևոր են: 30-ը նշել է, որ արժեք ասելով հասկանում են հայրենիք,ընտանիք,տուն, քանի որ ամուր ընտանիքից է սկսվում արժեքային համակարգ ունեցող քաղաքացու դաստիրակումը, 28%-ը նշել են, որ իրենց համար արժեք է այն ինչ կապվում է հարգանքի արժեքների հետ: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել:11%-ընշել է ճշտապահություն տարբերակը: Այսպիսով ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: <<Երեխան ծնվում է ընտանիքում, հետո դրվում մեր ձեռքերում, որ կոկենք: Նրա համար ո՞վ է աշխարհը ճանաչելու բանալին, ընտանիքում ծնողն է, մանկապարտեզում եւ դպրոցում՝ դաստիարակն ու ուսուցիչը: Երեխան ընտանիքում ծնողի արժեքների կրողն է, իսկ մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակի և ուսուցչի>>:

2.Ի՞նչ արժեքներ են այսօր անհրաժեշտ տարրական դասարանների աշակերտներին:



Տրամագիր 10

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ Մայրենիի դասագրքերում ներառված դասանյութերը նպաստում են սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Այսպիսով՝ ամբողջացնելով մասնակիցների պատասխանները, կարող ենք եզրակացնել, որ Մայրենիի դասագրքերում ներառված դասանյութերը սովորողների մոտ ձևավորում են բազմաթիվ կարևոր արժեքներ:

Հետազոտվող դասվարների մեծամասնությունը՝ 33%-ը, պնդում է, որ Մայրենիի դասագրքում մեծ տեղ է հասկացվում հայրենասիրական և աշխատանքային դաստիարակությանը, մասնակիցների մյուս մասը՝23%-ը առանձնացրել է բարոյական դաստիարակությունները: Դասագրքում տեղ են գտել 23% նաև այնպիսի դասանյութեր, որոնք նպաստում են ընտանեկան, ֆիզիկական, գեղագիտական, բնապահպանական դատիարակության ձևավորմանը: Այսպիսով՝ ուսումնասիրելով դասվարների պատախանները, կարող ենք հասկանալ, որ դասագրքում մեծ տեղ է տրված հայրենասիրական, աշխատանքային և բարոյական դաստիարակությանը, քիչ մաս չեն, բայց դասվարները պետք է գիտակցեն և դաստիարակեն այնպիսի աշակերտներ, որոնք կունենան համամարդկային արժեքներ և կդաստաիրակվեն աշխարհաքաղաքացի:

3.Մայրենիի դասագրքերը արդյո՞ք հնարավորություն են ընձեռում արժեքների ձևավորման համար:



Տրամագիր 11

Հետազոտությանը մասնակցող տարրական դասարանների ուսուցիչների մեծամասնությունը՝ 78%-ը պնդում է, որ դասագրքում առկա են բազմաթիվ դասանյութերը, որոնք նպաստում են, հնարավորություն են ընձեռում սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Վերլուծելով մասնակիցների նշված պատասխանները կարող ենք եզրակացնել, որ նրանց կողմից առանձնացվել են այն դասանյութերը, որոնցում նկարագրվում, բնութագրվում է բնությունը, գեղեցկությունը, մասնակիցների մյուս մասն էլ նշում է, որ դասագրքի յուրաքանչյուր էջում էլ կան նյութեր, որոնք ունեն գեղագիտական նշանակություն և սովորողների մոտ ձևավորում են գեղագիտական ճաշակ: Տարրական դպրոցի ուսուցիչների մեծամասնությունը պնդում է, որ դասագրքում ներառված բոլոր դասանյութերն էլ ունեն դաստիարակչական նշանակություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարելով տեսական և հետազոտական ուսումնասիրություններ և վերլուծություններ, եկանք հետևյալ եզրահանգումներին.

1.Վիրտուալ տիրույթում ազատ հաղորդակցումը, սոցիալականացման և դաստիարակության ձևերի բազմազանությունը մեծ ազդեցություն ունեն կրտսեր դպրոցականի արժեքային համակարգի ձևավորման վրա. արժեհամակարգի ձևավորման թերությունները չափազանց դժվար է հաղթահարել հետագա տարիներին, իսկ բացթողումները կարող են պատճառ դառնալ անհատական զարգացման բացասական հետևանքների:

2. Տարրական դպրոցում կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման ընթացքում պետք է հաշվի առնել կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները, անհատական պահանջմունքները՝ ձևավորելով հասարակության զարգացման համար անհրաժեշտ անձնային որակներ:Մայրենիի դասագրքի դերը սովորողների արժեկողմնորոշման գործում մեծ է. ազգային հպարտության ոգով, ստեղծագործական, մշակութային որակներով սոցիալականացված անհատի ձևավորման ու զարգացման համար, որի համար պետք է ներառվեն դաստիարակության հետևյալ բաղադրիչները.

- Բարոյական արժեքներ՝ ազնվություն, սեր իր և միջավայրի հանդեպ, հարգանք, հոգատարություն
- Գեղագիտական արժեքներ՝ գեղեցիկի, մարդու, շրջակա միջավայրի ճանաչում, ընդունում և պահպանում
- Մտավոր արժեքներ՝ սեր դեպի գիտելիքը, դպրոցը, գիրքը, ինքնաճանաչողություն
- Իրավական արժեքներ՝ իրավունքի ձևավորում, պարտաճանաչություն, կարգապահություն
- Ֆիզիկական արժեքներ՝ անձնական հիգիենա, առողջություն, օրվա ռեժիմ և այլն:

Գրականության ցանկ

1.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս.: Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար: «Մանկավարժ» հր.:Երևան, 2005, 456 էջ

2.Ամիրբեկյան Գ., . Վարդանյան Ա.Տ.: Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար: Երևան, «Նոյյան տապան», 2005, 407էջ

3.Բաբանսկի Յու. Կ., Մանկավարժություն, 2-րդ հատոր, «Լույս», 1987

4.Գյուլամիրյան Ջ.Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր. «Զանգակ» հրատ., 2015, 315 էջ

5.Դասախոսությունների դասընթաց մանկավարժությունից /Գ.Հ. Հարությունյան,Ռ.Ջ. Աղաբեկյան, Ջ. Բաղդասարյան, 2011

6.Էլկոնին Դ.Բ.: Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, «Լույս» հրատ., 1975, 68 էջ

7.Թորգոմյան Լ.Վ. Մանկավարժության ընդհանուր հիմունքներ Երևան 2005:

8. Թորգոմյան Լ.Վ. Արժեքի գաղափարը և նրա զարգացումը Վերածննդի դարաշրջանի հայ մշակույթում, “Մանկավարժ” N3, 2010թ

9.Ղույումչյան Գ.Ե., Դեռահասի գիտական համոզմունքների ձևավորմանը ուսուցման գործընթացում. Երևան,Լույս, 1986

10.Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն. երկու գրքով, Գիրք 1, Եր., «Զանգակ 97»,2005, 464 էջ

11.Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Բալայան Ա., Ինչպես պլանավորել մայրենիի դասը: 3-րդ դասարան, Եր.: «Զանգակ» հրատ., 2017, 512 էջ

12.Թունյան Ջ.Ե., Լ.Մ.Երիցյան: Կրտսեր դպրոցականի հոգեբանություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան, 2013թ

13.Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1981 թ

14.Հայոցլեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի

առարկայական ծրագիր (1-9-րդ դասարան)։ Եր., Անտարես, 2011, 81 էջ

15.Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ (1-9-րդ դասարան)։ Եր., Անտարես, 2011, 40 էջ

16.Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի-3»։ Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք։ 239 Մաս 1, Եր., «ՄԱՆՄԱՐ», 2020,88 էջ

17.Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի-3»։ Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք։ 239 Մաս , Եր., «ՄԱՆՄԱՐ», 2020, 80 էջ։

18.Бейлунцон, Б.Г., Зуев Д.Д. (1985). О функциональном подходе к оценке школьных учебников. Проблемы школьного учебника, вып. 5, Москва “Процвещение” .

URL: https://applied-research.ru/ru/article/view?id=8050

19.Л. П. Крившенко, Педагогика: Учебник, Изд-во Проспект, 2010. - 432 с https://studfile.net/preview/5183125/page:26/

20.В. И. Смирнов, ДИДАКТИКА. Часть I. Общетеоретические основы : Учебное пособие**.** Нижнетагильская государственная социально-педагогическая академия, 2012. – 306 с.

21.https://docplayer.ru/69158701-Uchebnik-istorii-i-ego-rol-v-uchebnom-processe.html

22..Роль школьного учебника в образовательном процессе. https://bit.ly/2H7gwxV21.